ՄԻԱՅՆ ԵՐԵՔ ԲԵԿՈՐ

(Պրպտումներ Զվարթնոցի ավերակում)

Զվարթնոցը հայ ճարտարապետական արվեստի վաղ միջնադարի այն կոթողներից է, որը վկայում է մեր ժողովրդի կուլտուրայի իր ժամանակի մակարդակը և ստեղծագործական հնարավորությունները։

Այս հուշարձանը կործանված վիճակում նույնիսկ այնքան է պատկառազդու, որ ստիպում է ակնածանքով մոտենալ նրա բազմաձև ու բազմանշանակ բեկորներից յուրաքանչյուրին, մտորել, պրպտել և գտնել նրա գրված տեղը երբեմնի կանգուն հոյակերտ շինության օրգանիզմի բարդ հյուսվածքում։

Անցած շուրջ տասներեք դարերի ընթացքում շարունակ խոսվել է Զվարթնոցի մասին։ Ձեռագրերում պահպանվում են հիացական արտահայտություններ ու գովեստներ, նույնքան էլ, թերևս ավելի շատ, հետազոտողներ են զբաղվել նրա ուսումնասիրությամբ, թեև այս վերջիններից մեզ գրավոր ոչինչ չի հասել։ Հայտնի է, սակայն, որ Զվարթնոցի օրինակով այլ տաճարներ են կառուցվել, երբեմն ամբողջությամբ կրկնելով, երբեմն որոշ դրվագներ ու մանրուքներ օգտագործելով նոր կառուցումներում։ Դրանցից են Բանակ տաճարը՝ Տայքում, Գագկաշենը՝ Անիում, Լյակիթը՝ Աղվանքում ու բազմաթիվ բոլորանիստ և այլ պարագծի տաճարներ հայոց աշխարհի տարբեր նահանգներում, գավառներում ու բնակավայրերում։

Միանգամայն բնական է, որ մեր օրերում նույնպես հետազոտողները ժամանակ առ ժամանակ անդրադառնում են Զվարթնոցին, նրա մնացորդների ուսումնասիրությանը, երբեմն նոր միայն նկատում որոշ կողմեր, հայտնագործում բեկորների ճիշտ տեղն ու նշանակությունը երբեմնի կանգուն տաճարում: Պատահում է նաև, որ հետազոտողներից մեկի կողմից որոշ բեկորներ մնում են չարժեքավորված, իսկ մյուսը այդ բեկորների հիման վրա ճշգրտում է տաճարի մինչև վերջ չլուսաբանված որոշ հանգույցներ, հավաստում կամ մերժում ճանաչում գտած կարծիքներ:

Ահավասիկ մի օրինակ:

Հայտնի է, որ ճարտարապետ Թորոս Թորամանյանը դեռևս մեր դարի սկզբին Զվարթնոցի մնացորդների ուսումնասիրության հիման վրա ստեղծել է տաճարի վերակազմության նախագիծը: Համաձայն այդ նախագծի, եռաստիճան տաճարի առաջին աստիճանի սահմաններում շինության խաչակերպ կենտրոնը բոլորում է շրջանց մի սրահ ու նրա վրա, նույնպես բոլորակ, վերնասրահ-վերնահարկ: Թորամանյանը հիշյալ վերնասրահի համար հատակագիծ չի կազմել, սակայն այդ ցույց է տվել տաճարի ներքին տեսքը պատկերող կտրվածքի գծագրում, սյունակամարաշար օթյակի ձևով խաչաթևերից երեքում (չորրորդում գլխավոր խորանն է, ստեղծված խուլ պատով): Իր աշխատությունների ժողովածուի 249-րդ էջում Թորամանյանը նաև հուշում է, թե ինչպիսի ձև կարող էր ունենալ վերնասրահն ստեղծող ներքին բոլորակ պատը:

Հետազոտողները հիշյալ վերնասրահի երբեմնի գոյությունը հիմնավորում էին այն լուսավորող կլոր պատուհանների քարե բազմաթիվ բեկորների, հարավ-արևելյան կողմում ընկած զանգվածի ներսում եկեղեցական իրերի պահեստանման խորշի առկայությամբ (որ գտնվելիս է եղել վերնահարկի բարձրության վրա), հարավ-արևմտյան կողմի զանգվածի գետնահայաց մասում պահպանվող կրաշաղախով պատրաստված հատակի գոյությամբ և այլ տաճարների համապատասխան դրվագների համեմատության արդյունքներով:

Զվարթնոցի հետազոտությամբ զբաղվողներից Ս. Մնացականյանը ժխտում է վերնահարկի երբեմնի գոյությունը։

Նա շարադրում-թվարկում է ավերակում պահպանված ձևավոր քարաբեկոր-ները, որոնցով և հիմնավորում-ստեղծում է իր վերակազմությունը։ Այժմ պարզվում է, որ կարևոր բեկորների նրա թվարկումն ամբողջական չէ, այդտեղ բացակայում է այն երեքի հիշատակումը, որոնք իրենց ձևով ու չափերով գալիս են լրացնելու փաստերը և հավաստելու վերնահարկի գոյությունը համաձայն Թորամանյանի վերակազմության։

Հուշարձանների ուսումնասիրության ընթացքում տողերիս հեղինակը ավերակի քարակույտերում շարունակ որոնում ու չէր գտնում վերնահարկ օթյակի բոլորակ սյուներից որևէ բեկոր, սակայն համոզված էր, որ պիտի լինի։ Եվ եղավ, այն էլ՝ երեքը։ Հասկանալի է, որ դրանք տեղ չեն գտել և չէին կարող գտնել Ս. Մնացականյանի վերակազմության մեջ։

Քառասունհինգ սանտիմետր տրամագծով, երեք քառորդ մասով սրբատաշ բոլորակ սյուների այդ երեք բեկորները, որ տաճարի մի այլ մասում և, նույնիսկ, կից կառույցներում տեղ չունեն, անվերապահորեն պատկանում են վերնահարկի՝ տաճարի կենտրոնի վրա բացվող սյունակամարաշարերին, ճիշտ այնտեղ, որտեղ ցույց է տվել Թորամանյանը իր վերակազմության գծագրում։

Բնական է մտածելը, որ Թորամանյանը, իր ժամանակին այդ բեկորները տեսնելով, չափագրել, որոշել է դրանց տեղը և իր գծագրում պատկերել է ճշտորեն, ստորին սյունակամարշարի սյուների տրամագծերի համեմատությամբ՝ ավելի բարակ։ Այժմ այդ բեկորները գտնվում են հուշարձանի շուրջը եղած բազմաթիվ ձևավոր քարերի մեջ, երկրորդ պլանում, ինչ-որ չափով աննկատելի։

Մեր մյուս հուշարձանների համեմատությամբ Զվարթնոցի պահպանությունն ավելի հուսալի վիճակում է. պահակությունը միշտ տեղում է, մաքրությունը՝ բավարար։ *Սակայն այսքանը չափազանց քիչ է մի հուշարձանի համար, որի ամեն մի բեկորը որոշակի նշանակությունը ունի տաճարի ամբողջական վերակազմության, առավել ևս, վերականգնման նախագծի ստեղծման համար։*

Բանն այն է, որ Զվարթնոցի բեկորները, ծածկված լինելով զգալի հողաշերտով, դարերի ընթացքում պահպանվել, հասել են մինչև մեր օրերը: Սակայն վերջին յոթանասուն տարիների ընթացքում, պեղումներով բացված այդ նշխարները թողնված են բնության քայքայող ուժերի քմահաճույքին: Ձյունը, անձրևը, քամին, ամռան արևն ու ձմռան ցուրտը անարգել հողմահարում, մաշում են դրանք: Մեր աչքերի առջև բեկորների վրայի քանդակներն ու ձևերը աստիճանաբար քայքայվում, անհետանում են: Այդպես շարունակվելու դեպքում Զվարթնոցի ավերակը, ոչ հեռու ապագայում, գիտության և արվեստի համար մեծ չափով կարժեքազրկվի:

Անհրաժեշտ է, որպեսզի ավերակի բոլոր քարերը բարձրացվեն, դրվեն համապատասխան պատվանդանի վրա, ծածկվեն և պաշտպանվեն մթնոլորտային տեղումներից ու արևից: Ըստ որում, դրանք պատվանդանների վրա պետք է այնպես տեղադրվեն ու դասավորվեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտության դեպքում մաքրել, չափագրել ու լուսանկարել:

Մինչև այսօր Զվարթնոցի ոչ բոլոր կարևոր բեկորներն են հաշվառված, չափագրված, լուսանկարված: Հետազոտողները գրեթե զրկված են եղել ըստ ամենայնի չափագրելու ու լուսանկարելու հնարավորությունից:

Զվարթնոցի կարևոր բեկորները պետք է համարակալվեն, ունենան իրենց քարտարանը: Այս ամենը, իհարկե, որոշակի չափով ժամանակ է պահանջում, սակայն պետք է կարծել, որ հնարավոր է դա իրագործել:

Աշնանը Երևանում տեղի է ունենալու հայ արվեստին ու ճարտարապետությանը նվիրված միջազգային գիտաժողով: Հարյուրավոր հյուրեր են ժամանելու Միությունից և արտասահմանյան այլ երկրներից: Զվարթնոցով է անցնելու հյուրերի և զբոսաշրջիկների երթուղին: Նրանք պիտի կարողանան մոտենալ Զվարթնոցի յուրաքանչյուր բեկորին, ուսումնասիրեն, չափագրեն, լուսանկարեն: Խիստ անհրաժեշտ է վերացնել այն սխալը, որ տարիներ առաջ կատարել են մասնակիորեն վերականգնողները՝ արևելյան ուղղանկյուն կառուցվածքի հարավակողմում բարձրացնելով երկու մետր հաստության պատ, մոտ 90 սմ-ի փոխարեն:

Զվարթնոցի պահպանության որակական բարելավումը անհետաձգելի գործ պետք է համարել։

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

պատմական հուշարձանների

պահպանման ընկերության

հանրապետական խորհրդի

նախագահության անդամ,

ճարտարապետ

«Երեկոյան Երևան», 1 ապրիլի 1978 թ.: